ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2013 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Հայագիտական 2-րդ միջազգային համաժողովի կազմակերպում. Երևան, 2013 թ., Հոկտեմբերի 15

ա) Համաժողովի հրավիրատոմսերի և ելույթների թեզիսների տպագրություն (2013 թ., 25-30 սեպտեմբեր)։

բ) Համաժողովի զեկուցումների և ելույթների հրատարակում առանձին ժողովածուով (2014 թ., 1-ին եռամսյակ)։

2. ՝Բանբեր հայագիտության՝ միջազգային գիտական հանդեսի տպագրություն. (2013 թ., երկու համար, մի շարք հոդվածներ ռուսերեն և անգլերեն լեզուներով)։

ա) Կազմակերպել ՝Բանբեր հայագիտության՝ միջազգային գիտական հանդեսի խմբագրական խորհրդի նիստ՝ տարին վեց անգամ։

բ) Հանձնարարել ՝Բանբեր հայագիտության՝ պատասխանատուներին մշակել հանդեսի 2013-2014թթ. հրատարակվող հոդվածների ծրագիրը։

գ) Ներկայացնել հանդեսի մոտակա երկու տարիների հայեցակարգը խմբագրական խորհրդին։

3. Ստեղծել ՀՈՒՖՀՀ կայքէջը (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով) 2013 թ., մայիս-հունիս։

ա) Առաջարկել բաժանմունքի ինստիտուտների տնօրեններին հիմնադրամի կայքէջում տեղադրել համապատասխան գիտական նյութեր՝ կապված հայագիտության ռազմավարության արդի խնդիրների հետ (2013թ., 3-րդ և 4-րդ եռամսյակ)։

4. Հայագիտական բնույթի գիտական նոր գրքերի հրատարակում.

ա) ՀՀ ԳԱԱ ՀՀԽ-ի հետ համատեղ մշակել հիմնադրամի կողմից տպագրվող հայագիտական գրքերի ընդլայնված ծրագիրը և ներկայացնել Հոգաբարձուների խորհրդին։

բ) Տարվա լավագույն աշխատությունները խրախուսել Հիմնադրամի կողմից հատուկ մրցանակներով և դրամական պարգևներով։

գ) Կազմակերպել հայագիտական առավել արժեքավոր և արդիական հնչեղություն ունեցող գրքերի թարգմանությունը օտար լեզուներով և դրանք հրատարակել։

դ) Ընթացիկ տարում հրատարակել Վիկտոր Համբարձումյանի մրցանակի հանձնաժողովի կողմից պատրաստված Անանիա Շիրակացու հոբելյանին նվիրված գիտական հոդվածների ժողովածուն։

5. ՀՀ կառավարության կողմից ընդունված Հայագիտության զարգացման հայեցակարգի դրույթներին համապատասխան մշակել և գործառույթի մեջ դնել ՀՈՒՖՀ Հիմնադրամի մոտակա շրջանի անելիքները։ Մշակել ռազմավարությունը։

6. Հայագիտական նյութերի էլեկտրոնային ռեսուրսների ստեղծում.

ա) Հայագիտական տեղեկատվական ժառանգության թվայնացման աջակցում (2013 թ., սեպտեմբեր)։

7. Աշխարհի հայագիտական հաստատությունների հետ համագործակցության ընդլայնում, նոր կապերի հաստատում, համատեղ հայագիտական ծրագրերի մշակում և իրականացում:.

ա) Գործնական բանակցություններ հայագիտական միջազգային կենտրոնների, այդ թվում և արտերկրի հայագիտական բուհական ամբիոնների հետ, առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար փոխաջակցության գործընթացը

8. Հայագիտական առաջնային ծրագրերի ֆինասավորում՝ համաձայն Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումների:

9. ՀՈՒՖՀ հիմնադրամի ֆինանսական ռեսուրսների համալրում ոչ պետական (այդ թվում և արտերկրի) համապատասխան աղբյուրներից:

ա) Անհրաժեշտ բանակցություններ, օտարերկրյա հյուրերի ընդունում, համահայկական գիտական և հասարակական բնույթի ֆորումների, համաժողովների մասնակցություն: Սերտ կապերտ ստեղծում Սփյուռքի հայագիտական կարևոր կենտրոնների հետ:

բ) Մասնակցություն և համատեղ կազմակերպում արտեկրում բազմաբնույթ բարեգործական միջոցառումների (հեռուստամարաթոն, միջազգային բարեգործական ցուցահանդես-վաճառքներ, փառատոներ, մրցույթներ):

10. Ստեղծել ՀՈՒՖՀ Հիմնադրամի անվանական բուկլետը, լոգոն, անելիքների ուղեցույցը և համապատասխան տեսահոլովակը (2013թ., հունիս-հուլիս):

Ընդլայնված ծրագրի կազմող՝
ՀՈՒՖՀ Հիմնադրամի գործադիր
տնօրենի պաշտոնակատար Ա. Վ. Իսահակյան

8 ապրիլի, 2013 թ.